



ՏԱՅՐԱՊՈՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ՔԱՅՐԱՊՈՒՆ

Պուկարիոյ համար տարեկան	10 ֆր.
» » վեցամսեայ	5 »
» » եռամսեայ	3 »
Արտատահմանի համար տարեկ.	12 »
» » վեցամսեայ	6 »
ՎՃԱՐՄԱՆՈՒՄ ԿԱՆԻՒԿ	

Նամակ, ծրար, և այլ պէտք է դրել հետեւեալ հասցեով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և խմբագիր Տաւրոս շաբաթաթերթի

Х. Чакхриянъ
 Редакторъ на вѣстникъ
 „ДАВРОСЪ“
 Варна България
 Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
 Rédacteur du Journal
 DAVROS
 Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամբները կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ: Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ եւ չեն տրուիր: Մանուցման առջը 20 անթ.: Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն: Մանուցմունք կ'ընդունուին անկէ լեզուաւ:

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 31 ՅՈՒՆՎԱՐ 1898

ԹԻԻ 2

ՆԱՄԱԿ ԶԵՅԹՈՒՆԵՆ

27 Դեկտեմբեր 1897

Կ'ըսէք թէ նամակ գրենք, շատ ու շատ գրենք և տեղեկութիւններ տանք այստեղի անցից ու դարձաւ առաջնորդ մասին:

Դէպքերն ու պատահմունքներն անպակաս են աստ, սակայն կը կը մտածենք թէ՛ ի՞նչ գրենք որ թարգմանիչները չկարծեն հաղորդուող մըն հեռաւորութենէ մինչեւ գայ ու ձեզ հասնի: Ինչ որ ալ ըլլայ դարձեալ պարտք կը համարինք ասկէ ետքը շարունակաբար տեղեկութիւններ տալու, եթէ անկախ պատճառներն արդեւ չը դառնան մեզ:

Քիւրաբերու և պաշը պողոթ թուրքերու Զէյթունը պաշարելը արդէն անհիմն է ըսինք: Դուք լաւ գիտէք՝ որ Զէյթունը ամեն կողմերէն մահմետականներէ շրջապատու է, որոնք տեղացի բնակիչներ լինելով և շատ պարագայներով ալ Զէյթունցիներէն զանազան կախումներ ունենալով՝ երկար տարին ներքէ ի վեր բարձր գրայնութեամբ կ'ապրենք, և իրարու հետ միշտ սիրով եղած ենք:

Եթէ երբեմն մասնակի բախմունք կամ գծաւորութիւններ պատահած են, անոր ալ պատճառը թիւրք կողմէ վարութեան և անոր չարագի պաշտօնէից թեւադրութեամբն կամ աւելի չիտակը ըսելով բանի ստիպմամբ եղած են: Վերջոր միջոցէն կառավարութիւն ըստած այդ կողմով (*) կը տեսնեն ամենքն ալ գառուն և ոչխարի նման անվնաս գրայններ են: Սակայն կառավարութիւն ըստած հիւաղը իւր անարարանքի ապահովութիւնը՝ միմիայն խաղաղ ժողովուրդի երկպառակուութեան և իրարու հետ գծաւորութեան վտանգը մէջ կը փնտռէ,

(*) Զէյթունցիք կողմուծ կ'անուանեն գեղին ու կանանց խառնաբոյն միողէն՝ որ շատ թուական է:

ուր՝ եթէ չի գտնէ, կ'աշխատի ըստեղծել, թունաւորելով զայն մարդարէի անուամբ և հաճի ու հօնաւի գիւղաւթի վարդապետութիւններով:

Աւելի մ'ըմեն ինչ հանդարտ է, ձիւնի ու ձմեռան սառնի հետ սառած են նաեւ իրենք ու դարձած են ինչ: Տեսնենք նոր գարունը՝ թէ ի՞նչ ծաղիկներ պիտի բանայ: Զէյթունցիներ հիւսն հին խաղաղ փրփուրով կ'ըսեն, որ անոր ապագայութեան տակ կ'սկսէ մուշակ գէտակեան սուրի նման իր գլխի վրայ կանգնած անասնական ստղծողը, հայի պոկատութիւնը:

Թուրքի կառավարութիւնը իր գոյութեան թուականներէն ի վեր, ինչպէս պարճանքով ալ խօսած են ու կը խօսին՝ օսման խառնաբոյնը իրար քսելու (օսմանցի կողմէ կ'որոշուի նպատակը), խոստում ու խոստումահրամաններու մասին աւտաւաշտելով ու սուտաւ ձեռն է. իսկ զանոնք գործողութեան համար կ'ընեն ժլատ, խուլ ու գոռ: Եւ Միայն ցանկալին այն է որ, այս հաղորդուող անգամ հաստատուած ու ապացուցուած ճշմարտութեանց ստիպել կրկին ու կրկին կը խառնուինք անոր սուտ ու խառնաբոյն խոստումներուն: Աւելի զարմանալին այն է որ, ամբողջ Եւրոպան ալ խաբուած ու խաբուելու վրայ է, պէտք է գիտնալ սակայն որ թուրք կառավարութեան ամբողջ գիւղանագիտութեան մանուածքը՝ ստուծութեամբ և խաբէական խոստումներով ժամանակ չահէն, և իրենց ստիպանքին ու ստիպանքին տեւական պահելու միջոցն է: Ահա հինգ հարիւր տարիներէ ի վեր Արեւելքի ու Արեւմուտքի քրիստոնեայ ազգերն — Հայը, Յոյնը ու Պուկարը — կ'ընեն կողմերու նման, իրենց սուտերու ու սուտ խոստումնց ջերմեւանդ հաւատացեալներ, հլու և հնազանդ կը սնուցանեն իրենց արեւնը քամիզ դահիճն:

Զէյթունի համար մուցուած են

62-66 թուականաց խոստումներն. ահագին Ֆրանսայի մը կայսր Նաբոլէօնի միջամտութեամբ եղած: Մուցուած են 77-78 թուականներու խոստումներն՝ Մեծին Բրիտանիայի միջամտութեամբ եղած: Մուցուեցան նաեւ 95-96 եղած խոստումները բոլոր պետութեանց հանդէպ: Ամենքը մուցուելով մուցուեցան, սակայն Զէյթունի զօրանոցն ու հայ ըստաւորական կառավարչի տեղ յունազգիի դայմագամ Եսմանը: Եթէ նոր ճիւղացուեցան, որոնք կը մնան իրենց տեղերին իրենց քար գայթակղութեան, ու թէ կանուխ որպէս բացարձակ շարժառիթ խոստութեանց ու արեւնալից կոխներու:

Թուրք կառավարութիւնը այլեւս չուզեր ըսել Զէյթունցու ինքրածները, իսկ իր բռնապետական պահանջներէն մազի չափ ալ հեռացած չէ. տեսնենք ասոնց հեռանալներն ի՞նչ պիտի ըլլան վերջապէս. այս մասին մեր կարծեք լաւ գուշակութիւն ցոյց չի տար:

Զէյթունի կառավարչական պաշտօնէութիւնն և ոստիկանութիւնը Հայերէ կազմուած են, սակայն կառավարչական ձեւակերպութիւնը գլխավոր թրքական են և հրահանգները կուգան Մարաշու փաշայէն, որ շրջապատու է Զէյթունի ոխերիմ թշնամի միւսիւրմաններով և որ իր հրամանները կ'ստանայ աւելի բարձրիցն:

Միով բանիւ, թուրք կառավարութեան յատուկ նպատակն է, Զէյթունը ցրուել և այդ բանին համար ալ չուզեր առիթը փախցնել: Զէյթունցու տնտեսական տագնապը և սնունդի պակասութիւնը կրնան թշնամիին մտադրութիւններուն աւելի մղում տալու. ուրեմն ո՞վ պիտի մտածէ այս ախուր կացութեան ամբողջութիւնը. ինքը՝ թշնամիին, թէ հեռակայ Հայ ազգայինը, որոնք չոր ու ցամաք կեցցէներով կը կարծեն թէ կ'ապրի ու կը մնայ Զէյթունին:

Այս անգամ այսչափ:

ՀԱՌԻՈ

ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ԱՌԹԻԻ

Անցեալ թուով ծանուցինք թէ՛ երկու ազգայիններ Տիար Երանիկ Բարսեղեան եւ Յակոբ Գուրգէթեան Պուկար ոստիկանութեան ձեռքով Օտեսա զրկուեցան:

Այս տարագրութեան պատճառն եղած է Հուլոյս անունով ասկէ 2 ամիս առաջ Կոստանին Բէթրէ կըլուքօֆի պատասխանատուութեամբ վառնայի մէջ հրատարակուած թուրքերէն թերթ մը, որուն որպէս թէ խմբագիրն եղած է Տիար Գուրգէթեան և տպագրիչն Տիար Բարսեղեան. ուրեմն խմբագրութիւնն ու տպագրութիւնը եղած է իրենց արտաքսման պատճառ:

Այսպիսի չնչին պատճառով մը երկու ընտանիքի ու զաւակներու տէր անձանց անակնկալ կերպով արտաքսուելուն մեր խելքը չի հասնիր: Պուկարական օրէնքը մամուլի ազատութիւն տուած է, այս գիտենք, և քանի որ պատասխանատուն յայտնի անձնաւորութիւն մըն է, առանց անոր բան մը ըսելու և պատասխանատու ճանչնալու երկու անպաշտպան Հայեր այս կերպով արտաքսել ուրիշ բան չը նշանակեր բայց եթէ թիւրիմացութիւն մը և կամ մասնաւոր թշնամութեան մը զոհ երթալ:

Վերջապէս շարժառիթը ինչ որ ալ եղած լինի. կը յուսանք որ Պուկար կառավարութիւնը ստուգելով անմեղութիւններն և գիտելով անոնց դժբաղդ ընտանեաց, հրաման կ'ընէ կրկին վառնա դառնալով իրենց ընտանեաց ու զաւակաց միւս թարանքը լինելու:

Իսկ մինչեւ երկու տարագրելոց վերադարձն, ընտանիքի ու զաւակներու տէր բարեխիղճ ազգայնոց կը մնայ ըստ կարի նիւթական նպաստներով օգնել անոնց ընտանեաց, և մեր Օտեսաքնակ Հայ ազգայիններէն ալ կը խնդրենք որ մարդասիրաբար հոգատար լինին ու միմիայն իրենց մօտ գտնուող յիշեալ երկու հիւրերն, որոնք միջոցներէ զուրկ են Օտեսայի պէս բազմաթիւ քաղաքի մը մէջ ապրելու:

ՄԵՐ ԲԱՐՔԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՆԻՋԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԵ

Խաղարանին մէջն ենք :
Միջոցառում լեցուած է արեւմտի
աղտոտ գործընկեր մը , որ կարող է
ամենէն զօրաւոր կազմերն իսկ թու.
նաւորել . . . :
Որի՞ հոգ :
Կանանց սեղանի հրապարակը ամեն
փոքրեկան թէ բարոյական նկա-
րագրութիւններ կ'ենթարկէ իրեն
. . . . և ահա անոր շուրջն ենք :
Իրաւ , որ մերթ գոհունակու-
թեան և յաճախ դժգոհութեան
նշաններով կը կծկուինք , մէկ վայր-
կենի մէջ տան անգամ ջղային
յայտնի սարսուռով մը կը ցնցուինք
և կարծես երբեմն մահուան դա-
ւուկը և երբեմն ալ ապրտակի կար-
մութիւնն է , որ կ'իշխեն մեր գէմ-
քերուն , բայց չէ՞ որ մենք լորձուն-
քոտ բերանով հայհոյելով հայհոյ-
ուելով կը շարունակենք մեր հաճո-
յալի արշաւանքը դէպի մութեանց
գերագոյնը :
Ձը կայ բան մը որ կասեցունէ
զմեզ մեր գահալէժ ընթացքին մէջ :
Ձէ՞ որ մեր դրամներու տէրը մենք
ենք ահա մեր միակ պատաս-
խանք այն ամեն միտմեղման կամ
բարոյական խրատներուն , որոնք
— օ՛հ — կուգան զմեզ անհանգիստ
ընելու մինչեւ իսկ մեր երիցս պաշ-
տեցեալ կանանց սեղանին քով . . . :
Պարապ է խօսել թէ Արեւմուտ-
քէն արդէն խոշոր հառաչներ կը
լսուին խաղամարտի համար և
Մօնթէն-քարթը — ըլլալով հանգիստ
խաղարաններու ամենէն պատուա-
ւորը — անհատական մեծ հարբս-
տութեանց աւերակներուն վրայ
արիւնով կանգնուած չէնք մէ . . .
պարապ է հաստատելու ճգնիլ որ
ոչ ոք կրցած է տիրանալ հարստու-
թեան մը , որ ուրիշն անմիջական
կործանումով երաշխաւորեալ լինի
և վերջապէս պարապի է վարդապե-
տել հաճոյքի մը հակառակը , որուն
մանաւանդ , ա՛խ կանանց սեղանը
տեսակ մը անբացատրելի մագնի-
սականութեամբ կը կապէ զմեզ իր
ճղճիմ ծոպերուն .
Մենք անոր հլու հպատակներն
ենք , անոր ծալքերուն շղթայուած
գերիներն ենք , զինուորագրուած
ենք — եթէ մինչեւ իսկ մեր տունն
է — ի հիմանց քանդելու խաղաղ
ու անգործ կեանքի մը շինուածքը
կատարեալ յամառութեամբ :
Մեր լէվեր ու լուիններ թո՛ղ գըլ-
տորտկին այդ ասուին վրայ ,
մեր թոքեր թո՛ղ մաշին այդ դժու-
խային համախմբումին մէջ , մեր Ե-
սուլիւնը թո՛ղ փշուրի այդ հայհո-
յութեանց փափրիքային հատու աղ-
ուաներուն տակ , մեր հինաւոր
բարեկամութիւնը նոյն իսկ մէկ
ֆրանքի համար թո՛ղ փոխուին խոր
ատելութեան և մեր հանրային թէ
անհատական արժանապատուութիւն
թո՛ղ վերաւորուի , թո՛ղ սատկի

կոյնոցի հաւասար անպատիւ ու
գարշահոտ միջոցառում մը մէջ , հե-
րիք է որ մենք կառուած միանք Պո-
լայի այդ անիծապարտ սեղանին և
ցոյց տանք որ վառնայի մէջ Հայն
է , որ կը կազմէ Երեւակ Նիգա-
կակցութեան առաջին դաշնակցին՝
այն է խաղամարտի մեծագան ու
վիթխարի բանակը :

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ
Վ.

Ներկայումս հայ ժողովրդի մէջ
ամեն բան , ինչպէս երևում է , մի
կողմն է թողնուած և մէջտեղ ըն-
կած է մի բաւ , որը դեռ մեր պա-
պի պապերն էին գործածում նեղ
տեղն ընկած ժամանակ :
Քանի որ վստ թէ լաւ , կարելի
էր ապրել , հայ ժողովուրդ մուս-
ցել էր այդ բառի գոյութիւն իսկ ,
հէնց որ հասաւ այս օրուայ անտա-
նելի վիճակին , նա յիշեց որ մի
մոռցուած բառ կայ , այ՛ , եթէ նա
լինէր , այս գրութեան չէինք հաս-
ներ : Դէ՛ , այ՛-մ հրապարակ հանէք
այդ խեղճ , ամենից մոռցուած բա-
ռը : Եւ նա՛ ամէկու , ինչպէս մի
ժամանակ Հայաստանի «թաղա-
հար» գուրտէ գալիս և կանգնած
հրապարակի վերայ զարմացած չորս
կողմն է նայում և ինքնիրեն հար-
ցնում , տեսնենք ինչո՞ւ անհանգիստ
արին ինձ , ո՞ւմ համար և ո՞վ է ին-
ձանում կարիք զգում : Եւ նա
շարունակում է սպասել . . . խեղճ
Միտքի՛ն , ինչո՞ւ համար տաս-
նեակ տարիներ առաջ գոյութիւնդ
մոռացել , քեզ իբր մի ասպետի
փալաս դէն էին ձգել , և քո շուրջդ
առանց քեզ վերայ մի փոքր ուշա-
դրութիւն իսկ դարձնելու : Մեր
հեռուներ առաջներ սրած , թողած
ժողովուրդի արիւնարբու թշնամին ,
միմիայն միան էին կրճում : Ի զուր
դու աղբաւան հայեացք էիր ձը-
գում հայ ժողովրդին , նա էլ քեզ
մոռացել էր , նա էլ ինչպէս դաշ-
տում ընկած լիճ՝ երկու արտոժակ-
ներ բաց , ատամներ սրած , թե-
թեւսօրիկ գիշատիչների մէջտեղ
ընկած դէս ու դէն էր գըլրում ,
իսկ նրա արիւնարբու թշնամին ժա-
նիքներ ածելիի պէս սրած , ճանկեր
բարձրացրած , մինչ մեր հերոսներ
միմեանց հետ էին կուռում , նա
կրճում էր և կրճում խեղճ ժողո-
վրդի արիւնաթաթախ միսը , և ժո-
ղովուրդը աղբաւում էր մէկ կամ
միւս գիշատիչ հերոսներին և ինքն
իր թուլացած ձեռքով կարում էր
մարմնից մի կտոր միս և ապիս
մէկին կամ միւսին , փրկելու համար
նրան իր արիւնարբու թշնամուց . . . :
Բայց նոքա առնում էին մի կտոր ,
խել մը մաշտուքներէր յետոյ կուռ
տալիս էին և նորից գիմում դէպի
ընկած լէշ . . . կրկին ատամներ
կրճտում միմեանց վերայ . . . :
Մեծ թշնամին իր մեծ կտոր զար-

նում տանում էր և մերոնք մի մի
փոքրիկ կտոր միայն առնում : Ահա
այսպէս շարունակուեց մինչեւ այն
ժամանակ երբ թշնամին կշտացաւ
և այժմ իւր արիւնաւայ «մուլթն»
ու թաթիւնն է սրում . իսկ ժողո-
վուրդի լէշի վերայ այլեւս ոտից
մինչեւ գլուխ մի կտոր չը մնաց . . .
մնացին միայն ոսկորներ . . . : Այն
ժամանակ նա ա՛խ քաշեց և քեզ
մտաբերեց խեղճ Միտքի՛ն : Նա
քեզ է կանչում , նրա ոսկոր-
ների , արիւնաթաթախ վէրքերի
վերայ սպեղանի դնելու . . . :
Իսկ դու , բարեսէր , անյիշաբար
միտքիւն , դուրս եկո՛ւր , հրապա-
րակ նետուիր . այժմ փնտռում ես
միացնել , որին դու՛ պէտք ես : Այն
երկու գիշատիչներ , որոնք մեզ մօտ
կեդրոն ու Բիւրօ են կոչւում , նոքա
մտածում են որ ոսկորների մէջ
դեռ ուղեղ ու ծուծ են մնացել և
դրա համար են այժմ կուռում , իսկ
առճիկն արդէն այդ ո՛ւղեղն ու
ծուծն էլ է գտել և կամաց կամաց
ծծում է . . . իսկ ոսկորներ քեզ են
կանչում , քե՛զ , Միտքի՛ն : Ինչո՞ւ
համար այդ կմախքացած ժողովուր-
դը չի հասկանում քեզ , մոռցում .
փալաս կանչելու , պատճառը . . . :
Է՛հ , ժողովուրդ , ժողովուրդ ի՛նչ
ես ի զուր անհանգստացնում խեղճ
Միտքիւն , առ՛ւր ինչ կարող ես
ազատել առճկի ձեռքից , առ՛ւր
ոսկորներդ էլ , թող մեր կեդրոն ու
Բիւրօն ծծեն և երբ տեսնեն թէ
պղեւս ոչինչ չը մնաց ծծելու իրենք
կը միանան և և կը մոռնան
քեզ որ այլեւս անդարար չես
և իրենց առհեւս յեղափոխութիւնն
էլ , ու կը փնտռեն մի ուրիշ աւելի
օգտակար գործ , խօ՛ , անթիթ չեն
մեռնելու :

Լ Ի Օ

«Լօզան» լրագրոյ Պոլսոյ թղթակիցը
Յունիար 20 թուով հետեւեալը կը գրէ
իշխալ լրագրոյ , զոր նոյնութեամբ կը
թարգմանենք :

Հայերը դարձեալ օրակարգը ան-
ցած են : Պատրիարքը՝ Սուլթանին
մատուցած է 18 յօդուածներ պա-
րունակող յիշատակագիր մը որուն
մէջ ազգին յուսահատ վիճակին
վրայ կը ծանրանայ ու այդ ողբալի
կացութիւնը բարւոքելու միջոցները
ցոյց կը տայ : Այդ յիշատակագիրն
ալլը պիտի ունենայ ունէ արդիւնք ,
թէեւ շատ բանաւոր է այն :
Պատրիարքը Սուլթանէն կը խնդրէ
օգնութեան փութալ իր դժբաղդ-
ազգակիցներուն , ըսելով : «Հիւս-
պատանքը՝ Եւրոպայի նպատակները
(ոգորմութիւնն է բաւը) ուղղակի
բաշխելով՝ կը վարժեցնեն հայ ժո-
ղովուրդը դուրս նայելու և կամ
միշտ օտարներէն օգնութիւն ու
պաշտպանութիւն ակնկալելու : Ա-
ւելի աղէկ չէ՞ որ անոնք իրենց բնա-
կան բարեբարը նկատեն կառավա-
րութիւնը » :
Ի պատասխանի՝ Սուլթանը վերս-

տին կրկնած է իր հին խոստումները
ու հրամայած է 300,000 օսմ : ոս-
կիներու բաշխումը (1) : Ստուգիւ հայ
կարօտեալներու համար այս գործ-
նական միջոցը աւելի օգտակար է
քան թէ ֆնտսուած եկեղեցիները
և դպրոցները նորոգելու ու վերա-
շինելու խնդիրը ուսումնասիրելու
նպատակաւ կազմուած համալսար-
յան ճանաչողութիւն առաքումը :
Այդ յանձնաժողովը պարզապէս
կատակերգութիւն մըն է և կը զար-
մանանք թէ ի՛նչպէս մարդ կրնայ
խորհիլ եկեղեցիներու վրայ , երբ
անդին 40,000 ուրբեր փոքր Ասիոյ
ցուրտ կլիմայի խտութեանց են-
թարկուած են մերկ ու անթիթ :
Եւ սակայն պէտք է համոզուիլ
որ Թուրքիոյ մէջ Հայերը կայսրու-
թեան ոյժերէն մին կը կազմեն :
Անոնք հողագործ տարրը կը ներ-
կայացնեն , փոքր Ասիոյ մէջ սովը
տեղական մնայուն հանգամանք մը
պիտի ստանայ եթէ հայ տարրը
պակսի անկէ : Ռուսիա որ միշտ կը
դիտէ Թուրքիոյ տկարացումը , խոր-
հած է այդ բանի վրայ , երբ անիկա
որոշած էր չեղաք մնալ կոտորածնե-
րու պահուն :
Սակայն կ'երեւի թէ Սուլթանը
սկսած է այժմ փոխել իր տակտի-
կան : Սնկա կոմիդէզներու պե-
տերը Պոլիս կը հրաւիրէ : Արթին
բաշա չէր յաշուած այդ բանի մէջ :
Պիւլպիւլեան կ'երեւի թէ աւելի
բարեբաղդ եղած է : Կըսուի թէ
Շէյխիսլամը թեւադրած է Սուլ-
թանին այս որոշումը տալու , Ներսի
ժողովուրդը՝ Հայաստանի մէջ գըտ-
նուելները ցուրտէն թմրած ու վա-
խէն սարսափահար՝ այլեւս չունի
ձեռներեցութիւն : Մեծ քաղաքնե-
րու կոմիդէզներն են որ սակաւին
կուռոյ դաշտին վրայ կը մնան :
Ի՛նչ պիտի ըլլայ բանակցութեանց
ելքը : Անկախութեան և ինքնօրի-
նութեան երազները , ամեն մարդ
գիտէ , անիրականալի են : Զրոյց-
ներու համեմատ՝ որոց հիմը դըժ-
ուար է գնահատել , կ'երեւի թէ
կոմիդէզի այն 4 անգամները՝ որոնք
Պոլիս հասած են՝ նպատակ ունին
առաջարկելու Սուլթանին որ Հայե-
րուն տայ հող մը որ անոնց սեփա-
կանութիւնն ըլլայ : Անոնց կարծի-
քով՝ այդ բանին պիտի յաշողէին
թէ ստիպելով թուրքերը գաղթելու
և թէ կոչում ընելով Ասիական
Թուրքիոյ ամեն հայերուն որոնք
այդպէսով պիտի կազմէին հպատակ
բայց ինքնօրէն գաղթականութիւն
մը (2) :
Այս հայկական առաջարկութիւն-
ները հիմնուած են 1878 ի պատե-
ւազմին ժամանակ Պուլկարիոյ հա-
մար ձեռք առնուած միջոցներուն

(1) Ոչ միայն կանխահաւ , այլ բա-
ցարձակապէս սուտ կը գտնենք այս
կարգի Սուլթանական առատաձեռնու-
թեան մը լուրը :
(2) Թուի թէ թղթակցին խելապա-
տակին մէջ միայն ծնունդ առած է
այդպիսի պատգամաւորութեան մը ժա-
մանումն ի Պոլիս : Ծ. Խ.

վրայ : Մէջ բերուած սոյն միջոցներն բաւական հետաքրքրաշարժ են յիշատակուելու համար :

Պատերազմէն առաջ Ռուս գործակալութիւնը Եւրոպայի հաւատացուցած էին թէ Պալքաններու մէջ Պուլկարաց թիւը 7 միլիոնը կ'անցնէր, մինչդեռ իրապէս 2 միլիոն էր :

Այդ ժողովուրդը կը բաղկանար գլխաւորապէս բուն թուրքերէ, թաւթարներէ և չէրքէսներէ : Արեւելեան Բուլղարի վարչական կազմակերպութիւնը արգիլեց թաւթարներու երկրին մէջ բնակութիւնը : Ռուսական բանակները փախցուցին Չէրքէսները : Ռուսական գրաւումը թուրք ժողովուրդը խեղաթել ըրաւ, և միահաղթեց գաղթումը տեղի ունեցաւ :

Պատմական իրողութիւն մ'է որ 24 ժամու մէջ 150 հազար գաղթականներ գրաւեցին Պոլսոյ փողոցները : Ռուսական գրաւման ժամանակ թուրքերը գաղթելու ստիպելու համար դրութիւն մը ստեղծուած էր : Կոզաքներու պզտիկ շոկաններ գիշերանց միւսիւրման գիւղերը կը պաշարէին, օգին մէջ հրացանի մէկ քանի հարուած կը քաշէին, կը սարսափեցնէին բնակիչները՝ որոնք կը փութային փախիլ դէպի ֆ. Պոլս, Գրգանլըզ, Թըրնօվօ եւն : Թուրք կառավարութիւնն ալ այս գաղթային շարժման կը նպաստէր : Պոլսոյ մէջ կազմուած էր գաղթականաց բարձր յանձնաժողով մը, այդ յանձնաժողովը Պուլկարիոյ նախկին միւսիւրման բնակիչները կը հաստատէր Անատոլիի դաշտերուն մէջ, անոնց ձրի հողեր, սերմնացու ու արջաւ կը տար : Անիկա զիրենք ազատ կը կացուցանէր տուրքէ ու զինուորագրութենէ քանի մը տարիներ : Այս բանը միայն Պուլկարիոյ միւսիւրմաններուն յատուկ չէ եղած, նոյնպէս ըրած են նաեւ Բուլմանիոյ, Սերպիոյ, Մոնթենեգրոյ և խորվաթի միւս լիմաններուն համար : Ինչո՞ւ չընէին միեւնոյն բանը փոքր Ասիոյ մէկ քանի նահանգաց միւսլիմաններուն համար ալ : Մուլթանը այդպէսով Հայոց երախտագիտութիւնը ու անձնութիւնը պիտի շահէր : Այս ազնիւ միջոցը թերեւս մոռցնել պիտի տար կոտորածները :

Արգարեւ գովելի է Եւրոպիոյ վեհանախութիւնը որ չը դադրիր զբաղելէ այս խեղճերով :

Զուիցերիա ցանկին գլուխը կը գտնուի, նշանաւոր տեղ մը կը բռնեն նաեւ գերմանք : Շատ լաւ կը խօսուի անոնց Պէպէք հիմնած որբանոցի մասին : Վերջերս խնդիր եղած էր գնել հողեր (գետիկներ) փոքր Ասիոյ մէջ, հոն հաստատելու համար գաղթականութիւններ ուր պիտի հաստատան հաւաքուած տրւաքները : Գերմանական կառավարութիւնը ակնայն չէ կախած մասնաւոր առատաձեռնութեան այդ փորձերուն, զի այդ բանը թուրքերը պիտի նեղացնէր, և գերմանական քաղաքականութիւնը շատ առաջ է Հայերէն :

ՍՏՈՐ ԵՐԵՒՈՅԹ ՄՍԼ

Վառնա, 26 Յունի. 98.

Երբ Մայր-Հայրենիքը արեան մէջ թաթխուած մահ կը բուրէ, երբ ամբողջ ժողովուրդ մը դաղթական նութեան ձեռքով, հեռու հայրենիքէն, օտարութեան մէջ իսպառ փրճանալու վտանգին է ենթարկուած, Հայ յեղ. դաշնակցութիւնը, որ իր դարավերջիկ արարքներովը ու շահատակութիւններովը հետամուտ է եղած սրբապղծելու յեղափոխութեան վեհ տաճարը, չլացած ու յափշտակուած դրամի փայլուն տեսքէն, սրբուած, ա'լ իրեն համար արիւնոտ օրերու սարսուղի եցիկ յիշատակը և իր առջեւը պարզուող եղբերելի ողբերգութեան անգիտակից, նուազահանդէս մին է կազմակերպել, մեղմոյշ ձայներուն թրթռումներուն մէջ գտնալ կարծեւով ազգին ազատութիւնը :

Հարկ չի կայ շեշտելու թէ, ժողովուրդը այս անազնիւ և ստոր երեւոյթներու հանդէպ՝ արգահատելի զգուանքով միայն կը նայի այդ սոսուրաքարններուն վրայ, որոնք նուազահանդէսեան կեղտոտ փրփուրներու մէջ խեղդել կը յանդգնին իր յուզիչ ողբը, արդար բողբոխ այդ զօրաւոր ձայնը, և ինչ որ ամենէն զարմանալին և ծաղրելին է, այդ ծածղամիտները ազգ մը փրկելու մեծ մեծ գաղափարները և յաւակնոտութիւնը ունին դեռ : Գոցէ... բայց ո՞չ այս տեսակ ողորմելի ու խաբուսիկ միջոցներով : Ան որ ունի ազատ ու անկախ ըլլալու վսեմ գաղափարը, ա'ն որ ունի հաւատք ու վստահութիւն, գէպի յեղափոխականները, իր աշակցութիւնը ընծայելու համար, ըլլայ ալ նիւթական թէ բարոյական, պէտք չի ըզգար երբէք նուազահանդէսներու և կամ յեղափոխութեան հակապատկերը եղող այս կարգի մասնախայտութիւններու և ան կուտայ իր դրամը, ի հարկին կեանքը, իր ամբողջ եւութիւնը :

Չարիւնոտները բիւրաւոր դառնութիւններով համակուած ժողովուրդին սիրտը, խնայե'նք մեր հարիւր հազարաւոր նահատակներուն, որոնց սակոքները պիտի ելնեն ու բողբոխ մեզի գէմ :

Դաշնակցութիւնը կազմող անհատներու ուղեղային դրութիւնը և ոչ մէկ պարագայի մէջ այսքան բացորոշ չէր երեւցած, քան այս վերջին նուազահանդէսի առիթով, տեսնենք դեռ ի'նչ ծաղրելի տեսարաններու ակնատես պիտի ընեն մեզի, և այս ամէնը սա ենթադրել կուտան թէ, որչափ ատեն որ չունենանք լրջախոհ, առոյգ գաղափարներով պատրաստուած յեղափոխականներ, որչափ ատեն որ չունենանք զինքը առաջնորդողները ուսումնասիրելու կարող ժողովուրդ մը, այնչափ ատեն ստրկութիւնը մեր բաժինը պիտի ըլլայ :

ՏԻԱՄԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

Թուրքիայէն դուրս հրատարակուած հայ թերթերուն մեծամասնութիւնը երբ յաջորդաբար ձեռքս կ'առնեմ, ամենէն կարեւոր տեղը բռնած կը տեսնեմ երկու յեղափոխական մարմիններու Միութեան խնդիրը, սակայն դժբաղդաբար մինչեւ ցարդ չեմ տեսած ու է մի յօդուած՝ այդ պաշտելի դաղափառին դիւրութեամբ իրագործման միջոցը ցոյց տուող, ինչ որ կը փափաքիմ խնդրոյ նիւթ ընել ներկայիս :

Անշուշտ ժողովուրդին այսքան թախանձագին դիմումներէն յետոյ մեր ինքնակոչ կուսակցապետներուն բռնած դիրքէն և իրարու ուղղած նախատական ակնարկութիւններէն այժմ ամեն ոք լիովին համոզուած է որ երբէք չեն մտաբերեր իսկ ու է զիջում կամ զոհողութիւն ընել երկու կուսակցութիւններու մէջ ընդհ. Միութիւն մը գոյացնելու համար, այլ բացարձակապէս իրենց սկզբունքը բնարած են ասոսանդ ունեցած մի քանի հետեւողներուն միջոցաւ 5-10 դահեկան հաւաքելով յեղափոխական անուամբ թերթերուն գոյութիւնը պահպանել, որպէս զի այդ թերթերուն շնորհիւ իրենք ալ հանգիստ կեանք վարեն Եւրոպիոյ անկիւնները քաշուած : Իսկ հայրենիքի մեր եղբայրները թող տանջուին, թող տառապին, որի' հոգ :

Եթէ Միութեան համար անձնական գծու չկաւառնելով մեզ ըզբաղեցնողները անգամ մը հաշուենք, պիտի տեսնենք որ հայութեան մէկ առ հարիւր մասը անգամ չեն կրնար կազմեր : օրինակ, Եգիպտոսը, որ 10,000 հայ բնակիչ ունի կ'ըսեն, հազիւ 4-5 հոգի կայ Միութեան հակառակ երկու կուսակցութիւններու պատկանող և ատոնց ալ դրամ վճարողները արդէն յայտնի են թերթերու մէջ հրատարակուած ամենաչնչին նուիրատուութիւններէն, որոնց մեծ մասն ալ գրեթէ դժկամակեղով կը վճարէ միմիայն անամօթաբար եղած դիմումներէն ամօշալով : Իսկ ընակչաց մնացեալ մեծամասնութիւնը, որոնք մէջնեկին միլիոնատէր հարուստներ ալ կը պարունակեն, բոլորովին անտարբեր մնացած են նուիրական գործին օգնելու համար, առարկելով թէ՝ «Մենք չենք կրնար կարգ մը բախտախնդիրներու դրպանները պարտացնել, նախ միանալով վստահելի անձերէ մարմին մը կազմեցէք և յետոյ դիմեցէք մեզի» : Այս տեսակ առարկողներուն հանդէպ կուսակցութիւններէն ոմանք կ'ըսեն թէ՝ «Անոնք մեր ազգին քոստած անդամներն են, անոնց խօսքերուն պէտք չէ կարեւորութիւն տալ» : սակայն իրողութիւնը այն է որ ազգին արդի պահանջն ալ մեծ գումարի կը կարօտի իր ապագայի կացութեան վերջ մը տալու համար,

հետեւորդը կը պարտինք գէթ առնոց զգայունները սիրաշահել, ինչպէս որ այդ քոստած ըստածներուն մէկ մասը վերջերս ցոյց տուաւ իր զգացումներուն արգիւնքը հայ գաղթականաց առիթ, և որոյ մասին Եգիպտոսի Ալքատախնամ յանձնախումբերը խղճի հանդարտութեամբ կրնան լաւադոյն վկայութիւններ տալ :

Միեւնոյն ժամանակ անուրանալի է որ դրական աշխարհի մէջ բնական օրէնք է դարձած՝ մարդու մը ունեցածին առ առաւելն չլրկնել վստահիլ և չունեցողին ալ իր անկեղծութեան բաղդատմամբ աննշան գումար մը, իսկ եթէ մի քիչ նընմարուի կեղծութիւնը, ոչինչ : Ուստի մենք և մեր կուսակցապետները, քանի որ դրամատէրեր չենք և այսու հանդերձ ոմանք ալ յեղափոխական դիմակներով ծածկուած կուսակցութեանց դրամներն իւրաքանչեւ կը ձգտին, այլ եւս ի'նչպէս կը համարձակինք մեծամեծ գումարներու աչք տնկել յեղափոխական գործին յատկացնելու համար :

Արդ, բոլոր լուրջ ու անկեղծ հայրենասէրները երբ լիովին համոզուած են թէ՝ մեր ազգապաշտպան նկատուող միքանի գործիչներ անձնական «Ես» ի, «Փառք» ի, «Շահ» ի և կամ անգիտակցաբար անմիաբանութեամբ ազգակործանութեան դերեր միայն կը կատարեն, ուրեմն «Հնչակ», «Դրօշակ» և «Մարտ» թերթերը իրենց խրմբագիրներուն և — եթէ դատուին — անոնց անամօթ կուսակիցներուն երեսին նետելով, պէտք է ազգին պահանջին համեմատ գործի ասպարէզ գալ : Ի'նչպէս և ի'նչ ուղղութեամբ : Ահա՛ հարցը որուն ուսումնասիրութիւնը ամեն հայ պարտի ուշի ուշով նկատողութեան առնել և որուն համար իմ թուիքներն յաջորդով :

ԱԲԳԱՐ

ՍԵՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Որչափ իմ շունչ կենդանութեան տայ նշան
Պիտի սիրեմ զբեզ ո'վ իմ Հայաստան
Գիտեմ թէ, զուրկ ես քու թագէդ փառայեղ
Աւերակաց մէջ կը նստիս վշտաղբով
Սակայն՝ օրեր պիտի գան
Որ քո փառքեր ետ դառնան :

Թէեւ Եւրոպ գաւեր լարեց քո գլխին
Տալով սրոյն ըզբեզ բուրգին ու թուրքին
Թէեւ նոքա անգթաբար քանդիցին
Քոտուն ու տեղ, անբիծ կոյսերը լլկեցին
Սակայն օրեր պիտի գան
Որ քո փառքեր ետ դառնան :

Զըլլայ երբէք որ դու լինիս յուսահատ
Ամենուս սէրն ու ուխտ քեզ թեւք են ազատ,
Հոգւով ի վեր տարցեն ըզբեզ, ի Մասիք
Ուր քեզ մնայ նոր պատկով հայրենիք :
Դիտցիր օրեր պիտի գան
Որ քո փառքեր ետ դառնան :

ՊԵՆԵՆ

ՇԱՐԱՖ ՊԵՅԻ

ՍՊԱՆՆՈՒԻԼԸ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՖԵԴԱՅԻՆԵՐՈՒ
ՁԵՌՔՈՎ

Դրօշակի 1 Նոյեմբեր 1897
Թիւ 14 էն քաղաքում :

Ընդհանուր հրամանատարի մեծ հոգսերից մէկն էլ լինում է ստուգել թէ արդեօք սպանուած է Շարաֆ բէյը, թէ յաջողել է փախել: Այդ մտքով նա իր մօտ պահած է լինում Աղբակեցի մի ֆէդայի, որ Շարաֆի ծառան լինելով առաջ, շատ լաւ էր ճանաչում այդ արիւն-արբու ցեղապետին :

Գրոհ տալուց յետոյ հրամանատարն անմիջապէս ուղարկում է Աղբակեցուն սպիտակ վրանների մէջ դիակները քննելու և իրեն լուր բերելու : Շարաֆ բէյի վրանը մտնելով, Աղբակեցին տեսնում է որ անձ վերադարձնում է և կնոյր կենդանի : Մեծագոր Տիկինը - Շէյխ Լամիդի աղջիկը - ճանաչում է իր նախկին ստրուկին և նրա ոտքերն ընկնելով աղաչում է .

— Դու մեր հացն ես կերել . ազատի՛ր ինձ և ամուսնուս : Ես Հայ եմ կը գամ քեզ հետ . տարէ՛ք ուր որ կուզէք, միայն խնայեցէ՛ք մեզ :

— Ոչ ոք քեզ չի փրկի, իսկ ա՛մուսնուդ խնայել վեր է իմ ուժից, եթէ կարողանայի էլ, չը պէտք է անէի, պատասխանում է ֆէդային և մի վերջին գնդակ եւս պարպում Շարաֆին :

Միեւնոյն խնդրոյ վրայ մի եւրոպացիէ գրուած եւ «Դրօշակ»ի 15 Հոկտեմբեր 1897 Նո. 15 քրուոյն մէջ քաղաքական արտաստուած է :

Երբ վրանները մտան, Շարաֆին տեսան շապկանց, փամփուշանոց բաց կուրծքին վրայ, սպանուած իր նստած տեղում: Երկու հայեր, որոնք Շարաֆին մօտիկուց էին ճանաչում, հաստատեցին նրա մահը: Հայոց ձեռքն ինկաւ նրա սուրը, պաշտօնական գլխարկը, ուսգօտին, այն հրովարտակը, որով Սուլթանը նրան հրամանատար էր կարգել, և նրա շքանշանները՝ Օսմանիէ և Մէհմեդիէ (1) :

ՇԱՐԱՖԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

«Դրօշակ»ի 31 Յունիս 1898
Նո. 1 էն քաղաքում :

Վանի մեր ընկերներու լսածի համաձայն, Շարաֆ սպանուած չէ

(1) Արդեօք այդ անկողնակալ եւրոպացին ինչո՞ւ չէր հաճած այս երկարածիք թուումն մասանցի մէջ յիշատակել նաեւ Շարաֆի ականջները, որոնց՝ ֆէդայիներու կողմէն կտրուած ու կերուած լինելուն համար այնքան ազմուկ ու ժխոր յարուցուեցան ժամանակին :

խանասորի ձորին մէջ, այլ վերաւորուելով մազապուր աղատուած է կուռի դաշտէն (2) :

Դատաստանը ընթերցողին կը թողունք :

ՎԱՌՆԱՅԻ «ԻՐԱՒՈՒՆԻ»-ԻՆ

Յառաջիկայ Տառնուով պիտի տեսնուինք իրեն հետ, Չորեքշաբթի օրուան թերթին մէջ մեզ նըկատմամբ ըրած ակնարկութեան առթիւ, եթէ այն ատեն ալ փաստ ըսուածը փեսայի չը հասկնայ :

ՄԻԻԹԵՅԵՐՐԻԳԱ

Ալմանիանը ֆրանսիացի Զայքուրկ կազմեցողներն իսթանպուլ տան արմը օլաղը մալիմաթա կէօրէ՛ Բուսիա Չարը Նիքօլա հազըթէթէրի՛ քէնտի իսթանպուլ էլիսինէ խարիճիյէ նազըրը Գոնթ Մուրա վիէֆ վարթաթաթըլա արթիսէրի մէալտա Սուլթանա թէպիլդաթտա պուլընմըլ տըր :

«Չար հազըթէթէրի Բրէնս Եօրկինին կիրիտէ վալի ինթիլապ օլընմասընը մուսիլրէն արզուլէմէքուտ տիր » :

Իսթանպուլտան թալաթա եազըրտըղընա կէօրէ՛ Նիհայէթ Բրէնս Եօրկինու միւսթագիլ կիրիտէ վալի թալին օլընտըղընա՝ թիւրքիա իսլամլարընը թէպին իթմէք Նիլէթի իլէ անլէրին կէօղլէրինէ քիւլ սաչըպ եուլթուրմաթ իլին Եըլտըղ տալգալուգըլարը շու եօլը տիւլին միւլլէր տիր, չէօլլէքի՛ 120 միլիօն օրթօտոթս էհայիսինտէն պիր փաաիւհըն օլըլ թիւրքէ թապիլ օլուպ կիրիտէ վալի նասպ օլընմըլ տըր տէյու կազմեթաթըլա էհայիլէ իլան իթմէք :

Սըրպիանըն բայթաթիթը օլան Պէլկրատտա նէլը օլընան Նիմ լէս մի Մալէ Նօլիլնէ կազմեթաթընը զանընա կէօրէ՛ Վիլնէնա վէ Բէթէրսպուրկ հիւքիւմէթէրի պուտազըգատա Մակեգոնիանըն ալթօթօթօթիլիլն իլին միւլաքքէրէտէ պուլընըյօլըլար ըմըլ . իքի հիւքիւմէթէրին գալէմէ արմըլ օլտըլարը պիր՝ քօթիլալ մուծիպիլնէ՛ Մակէթօնիա իքիլէ թալսիլ իսթիլէքէք, Շտրգ զըմընա պիր Պուլկար վէտիկէր զըմընա պիր Սըրպ վալի թալին օլընաճաթ ըմըլ :

Սըրպիա բայթաթիլընըն Նիմ լէսմի կազմեթաթընը վէրսիկի պուհալատիսին նէ՛ տէրէճէ տալ ու էսասը օլտըլը պիլգէ նամալիւմ իսէտէ, էհէմմիլլէթէ շուրասը շայսն տըրքի՛ Բրէնս Եօրկինու Կիրիտէ

(2) Շարաֆին սպանուած չըլալը իր ժամանակին մէջ գրուած էր, ինչպէս հրատարակեցինք «Տառնու»ի Ա. թուոյն մէջ :

վալի թաստիգ օլընտըղընա՝ Սըրպլար տալի Օնա պազարաթ Նէ՛ իտտաա վէ մալթուպաթտա պուլընա՝ ճազըլար տըր :

Թալաթըն եազըլընա կէօրէ՛ կիրիտ միւսթիմանլարը Բրէնս Եօրկինու կիրիտէ վալի օլմամասընա Սուլթանտան իսթիլհամ իթմիլլէր տիր :

ԹԵԼԵԿՐԱՖ ՀԱՎԱՏԻՍԻ

Սթանպուլ 8 փետր. .
Իշխարիկինէ կէօրէ՛ Բուս էլլիսի Միւսիւ Չինօլիլէլ թալիմաթ վէրիլմիլ, Բրէնս Եօրկինու կիրիտէ վալի օլմասը իտաաաթընտան կէրի տուրտուն տէյու :

Լօնտօն 8 փետր. .
Գամարա ալըմըլ տըր . պու միւնասէպէթլէ սէյլէնիլէն Նուլթաա ինկիլթէրանըն տիկէր տէվլէթլէր իլէ օլան բօլիթիլաալ տօսթանէ օլաղը պէյան իսթիլմիլ . Թիւրքիա վէ Եուսան դարըլըլարընըն սուհանէ նէթիլէ պուլմուլ օլտըլընը զիքը օլընմըլ տըր :

Կիրիտին ալթօթօթիլա մէսէլէսինտէ պազը կիւծիլլէր զուհուլա կէլմիլ իսէ տէ, անլէրին տալի եազընտա թէսլիլլէ օլընաճաղընա իւմիտ կէօթէրիլմիլ տիր :

Պէրլին 8 փետր. .
Ալմանիա գապիլնէսինտէ խարիճիլէ պիւտմէսի իւլլէրինէ միւլաքքէրէ օլտըլը զէման Միւսիւ Պիւլթիլ Քիւս Չէու մէսէլէսի հազըլընտա մուֆասալ իզահաթլար վերուպ, Ալմանիանըն մէնֆաթլարըն հիւպիլ տէվլէթին մէնֆաթլարընա գալըլ օլմաաղըլըն սէյլէմիլ տիր : Կիրիտ մէսէլէսինէ կէլլինէ՛ սէյլէմիլ տիրքի՛ պիւտմէսի գօմիսիլընտա օ մէսէլէ վուգու պուլմուլ օլան միւսաալէտէն պէրու Ալմանիա հիւքիւմէթին հարէքէթինտէ հիլ պիր թէպէտաթիլաթ օլմամըլ տըր :

Ալմանիանըն կիրիտտէ կօզտէճէք հիլ պիր էնթէրէսի եօթ տըր . անճաթ իսթէմէլքի կիրիտ մէսէլէսի տէվլէթլէր պէյնիտէ իթթիլֆազըլըլ հուսուլա կէթիլսին վէ եաթիտ ումուսի պիր եանկընա սէպէպիլթ վէրէճէք պիր զըլըլմըլ օլտուն : Էլէր Թիւրքիա Բրէնս Եօրկինու իլին տիկէր տէվլէթլէր իլէ ուլալաճաթ օլուր իսէ՛ Ալմանիա հիլ պիր կէօնա իթիլաթաա պուլընմայաճաթ տըր : Վէ ուլալըլմաալալ իլ պալաթա լէնկ ալտըլընտա Ալմանիա պալաթա լէնկ ալաճաթ տըր : Պու տուրէթլէ Բուսիայա գալըլ կէլմիլ օլմայաճաթ տըր : Ալմանիա Բուսիա իլէ պուլնա մուհիմ բօլիթիլա մէնպաթլարը վէ էսկի ասարլար (աւանդութիւն) իլէ պալըլ տըր :

ԿԱՐԵՆՈՐ Ա.ԶԻ

Դործածուած հին պարսկական դրոշմաթղթեր կը գտնուին «Տառնու»ի խմբագրութեան քով, յորմէ փախաքողներ կրնան ստանալ :

ՆՈՐ ՆՊԱՐԱՎԱԶԱՌԱՆՑ
ՏԻՍՐ ՌԱՓԱՅԷԼ ԿԱՐԱԳԱՇԵԱՆԻ

Մուսալլա, Սասուն Սրճարանի կից
Սոյն վաճառատան մէջ կը գտնուին ամէն տեսակ նպարեղէնք, սուրճ, բըրինձ, շաքար, թէյ, լուբիա, սիմինտր (խմիլք), օճառ, իւղ, ձէթ, ձիթապըտուլ, պանիր, ապուխտ, երշիկ, լէմօն, կապ, մոմ, օսլայ (գօլա), լուցկի եւն. եւն. մաքուր, թարմ եւ արդարակիւն :
Յաճախողք ամէն կերպով կրնան գոհ մնալ սոյն վաճառանոցէն, թէ տեղւոյն յարմարութեանը եւ թէ գինը աւանդութեանը համար . ուստի ջերմիւ կը յանձնարարենք մաքուր ճաշակունեցող մերազն եղբարց որք իրենց ստիպողական պէտքերու գնումովն բարհաճին գոհացում տալու թէ իրենց ճաշակին եւ թէ վաճառատէր Տիար Գարագաշիանի որն որ արդարեւ արժանի է քաջալերութեան :

ԵՐԳԱՐԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁԻ
ԿԱՍ
ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ
Ի ՊԵՏՍ
ՓԱՐՔԻՆ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական գուրճալի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ երախայնութեան ծառայել նաեւ իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն անոնց համար :
Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր եւ կազմը վայելուչ :
Գին 80 ՍԱՆԹԻՄ
Կը վաճառուի վառնա Արեւելեան տպարան, Չրգ. Թաղ, Թիւ 1104 :

1898

ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ՌՈՒՄԱՆԵՐԵՆ
ՏԱՐԵՑՈՑՑ

Շարադատութիւն
ԱՐԺ. ՏԵՐ ԴԵՆՈՆԴ Բ. ՓԱՓԱՋԵԱՆԻ
ԿԱՐԱՅ
Հայոց եկեղեցի

Արժէք .	Պարզը	1	Փրանք
»	Լաթակաթ	1,50	»
»	Ոսկեգօծ	2	»

Կը գտնուի նաեւ վարնա, Մուսալլա ճատտէսի, Ապուրբարձման մզկիթի դիմացի զրաթաճառատունը :

Սոյն տարեցոյց կրնայ ամէն գրասենեկի ու տան վայելուչ ու պիտանի զարդը լինել, թէ՛ իր ճոխ ու հեռաքրքրական պարունակութեամբ եւ թէ՛ իր վայելուչ կազմով :

Կը գտնուինք թէ մեր Հայ Լուսաւորական քահանայք ծոյլ են, միայն պահպանիլ ըսել զիտեն եւ պակի ու թաղումի հոռեւ միայն կը վաղվտեն. քաջալերել պէտք է ուրիմն աշխատանքներն, ինչպէս է Արժ. ՏԵՐ ԴԵՆՈՆԴ քահանայ Փափագեան :